ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱԺ նախագահին

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 121-րդ հոդվածի 7-րդ մասը՝ ներկայացվում է ԱԺ «Հայաստան» խմբակցության՝ Կառավարություն ուղարկված գրավոր հարցապնդման պատասխանը ԱԺ նիստում քննարկելու առաջարկի մասին խմբակցության որոշումը:

Առդիր՝ 1 էջ

Խմբակցության քարտուղար՝ Ա.Մինասյան

08.11.2021թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑԱՊՆԴՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԻՍՏՈՒՄ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 113-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, ՀՀ Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության կանոնադրությամբ,

Նկատի առնելով այն, որ «Հայաստան» խմբակցության՝ 23.09.2021թ. որոշմամբ Կառավարություն ուղարկված գրավոր հարցապնդման պատասխանը «Հայաստան» խմբակցությունը ստացել է 25.10.2021 թվականին,

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետը, 121-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերը՝

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «ՀԱՅԱՍՏԱՆ» խմբակցությունը

ՈՐՈՇԵՑ

1. Անհրաժեշտ համարել Կառավարություն ուղարկված գրավոր հարցապնդման պատասխանի քննարկումը 2021թ. նոյեմբերի 16-ին գումարվող Ազգային ժողովի հերթական նիստերի չորեքշաբթի օրվա երրորդ հիմնական նիստում:
2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին՝ սույն որոշմամբ նախատեսված հարցն ընդգրկել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական նստաշրջանի օրակարգ և կազմակերպել դրա քննարկումը սույն որոշման 1-ին կետում նշված նիստում:
3. Սույն որոշման 1-ին կետում նշված հարցը քննարկելիս «Հայաստան» խմբակցության ներկայացուցիչը պատգամավոր Աղվան Վարդանյան է:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ «ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՐԾՎԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

08.11.2021թ.